

այնտեղ մեռնիլ եւ անոնց թողուլ ամէն ունեցածը, վասն զի կը վախնար՝ որ առանձինն կը մեռնի եւ բնակարանին մէջ կը գողնան ունեցածը որ բաւական չատ կ'երեւայ: Ահաւասիկ սոյն նամակն

“Հասցէ դիրս ի ձեռս գերյարգելեաց ի վանսրբոյ Հօրն մերոյ Գրիգորիոս Լուսաւորչի անբաց ի բարին:

“Ողջոյն սիրով գերյարգելեաց, Օգոստոսի 9, 1779:

Յուլիսի 29 արարաք պայման ընդ քարատաղցի (անշուշտ ընթեռնի՝ քարարացիին) վասն երկուց խորանաց, եւ ետու նմա մին ջետօլայ մերձ 30 ըսկուտի. եւ այս եղեւ երկու վկայիւք այսինքն բատրի գուրատի եւ այլ ոմն աշխտրհական գոնդի, եւ գուրագն է սուրբ Սեղբեստրոսի եկեղեցւոյ, որ ուրէ նոր խորանքն. եւ վարպետն ըսկաւ կերտելոյ վաղվաղակի վերջանալ ողորմութեամբ Տեառն մինչեւ յեղբմուն սեպտեմբերի կամ ի կիսի հոկտեմբերի. եւ այս այսպէս, այլ եւ կամիմ ողորմութեամբ Տեառն զամենայն ապրանս իմ տանել յոտս սուրբ Լուսաւորչիս մերոյ, նախ զամենայն գրեանս եւ սուրբ ըսկեստոյ եւ ապա զայլս ապրանս սակայն անդ նախ պատրաստ լինել վասն ապրանացս բնակութիւն, վասն զի ոչ կամիմ ի ձմերան եղանակին աստ լինիլ այլ անդ յոտս Հօրն մերոյ սրբոյ, եւ որպէս գիտէք զոր կամիմ եւ ոչ զառաջին նման որ խոսեցաք յանցելումն. եւ այլ այժմ՝ կամիմ համանգամայն զբնակութիւնն քօր եպիսկոպոսին մինչ յանկիւնս եղբման մատրից. եւ եթէ հաճոյ թուեսցի ի միջի մերում ոչ ձգել զմին պարունակն վասն գարնայնի եւ ամարան որ ուր եմ այժմ, եւ ի միասին ընդ ձեզ ապահովեալ ուրախանալ ողորմութեամբ Տեառն, եւ թէ հաճոք